ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԹԻՎ 1 ԵՎ ԹԻՎ 2 ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ն ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/4

ք. Մասիս «20» փետրվարի 2026թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Նորայր Հակոբյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Գևորգյանի, և Գևորգ Գևորգյան ԱՁ-ն, ի դեմս Գ. Գևորգյանի, որոնք գործում են ընկերության կանոնադրության և 30.01.2026թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրի թիվ 1 և թիվ 2 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 19-

ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **22 837 200 (քսաներկու միլիոն ութ հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 3 806 200 (երեք միլիոն ութ հարյուր վեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

Ընդ որում, հիմք ընդունելով 30.01.2026թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը՝ կատարված և սահմանված կարգով ընդունված աշխատանքների դիմաց վճարումները կատարվելու են <<ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊ ընկերության՝ սույն պայմանագրում սահմանված հաշվի համարին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի ոչ պատշաճ՝	
1.1	կազմակերպում	0,2%
1.2	կահավորում	0,2%
2	Անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանում	1.0%
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանում	0,2%

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և

տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների

հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 450 030
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ
Գ ՄԽՉՅԱՆ 2Փ. Տ30
Հ/Հ 220015590676000
ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 04239318

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա/Ձ ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Արարատի մարզ գ Մխչյան 2 փողոց, տուն 30
<<Ակբա բանկ>> ՓԲԸ
հ/հ 220019850357000
ՀՎՀՀ 47759406

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 20 » փետրվարի 2026թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/4 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-նախահաշիվ*

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրի թիվ 1 և թիվ 2 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքներ

Հազար ՀՀ դրամ

h/h	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին	Գումար
1	2	3	4	5	6
	Տարածքի բարեկարգում				
	Սալվածք				
1	Մայթերի գոյություն ունեցող ասֆալտբետոնյա ծածկի քանդում	100մ2	1,5500	9,22	14,29
2	Մայթերի հիմնատակի քանդում	100մ3	0,19	71,68	13,33
3	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ^2	1,5500	151,50	234,83
4	Բիտումի տարածում 4.12կգ/ 1մ²	տն	0,64	267,22	170,64
5	Անցումների և հարթակի ծածկույթ մանրահատիկ ասֆ/ բետոնից 3սմ հաստութ.	100մ^2	1,5500	336,48	521,55
6	3-րդ կարգի բնահողի մշակում 0.25մ3 տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոմեքենայի վրա	100մ3	0,1200	110,33	13,24
7	Շին.աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթ. էքսկավատ.	1000մ^3	0,03835	877,53	33,65
8	Տեղափոխում 8կմ	տն	61,36	2,89	177,34
	Ասֆալտապատման աշխատանքներ				
	Նախապատրաստական աշխատանքներ				
1	Գոյություն ունեցող եզրաքարերի քանդում	100մ	4,5000	86,07	387,30
2	Ասֆալտբետոնյա ծածկի քանդում	100մ2	6,0900	9,22	56,16
3	Ճանապարհի հիմնատակի բնահողի մշակում 0,25մ3 տարողությամբ էքսկավատորով, բերնելով ավտոինքնաթափ	100մ3	1,22	95,88	116,79
4	Տեղափոխում 5 կմ լցակույտ	տն	194,9	2,01	391,13
5	Ճանապարհի անհարթությունների ուղղում ավտոգրեյդերով	100մ2	10,15	26,15	265,41
	Ծածկի կառուցում				
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ^2	10,1500	151,50	1537,75
2	Բիտումի տարածում 4,12տն/ 1000մ2	տն	4,18	267,22	1117,44
3	Ծածկի շերտի իրականացում 5 սմ հաստութ.մանրահատիկ "Բ" տիպի, տաք, խիտ ա/բ խարնուրդից	100մ^2	10,150	524,60	5324,72
4	Շին աղբի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0,063	877,53	55,18
5	Տեղափոխում 5 կմ	տն	100,61	2,01	201,93
	Եզրաքարերի տեղադրում և սալիկապատում				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150*300 Ռ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	4,720	1276,44	6024,78
2	Առկա դիտահորերի թուջե մտոցով ե/բետոնյա հավաքովի կափարիչների ուղղում / 8 հատ /	մ^3	3,600	62,68	225,64
3	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.բազալտե խճով	100մ^2	2,2200	158,37	351,59
4	Ց/ավազի չոր շաղախից հիմնատակի իրականացում 60մմ / 1մ3-ին 150կգ ցեմենտ /	մ^3	13,32	25,88	344,68
5	Բետոնե սալիկներով հարթակի իրականացում / երկրորդ շերտը մոխրագույն «հին քաղաք» տեսակի. կամ համարժեք այլ տեսակի 5սմ/	100մ^2	1,110	751,04	833,66
6	Բետոնե սալիկներով հարթակի իրականացում / երկրորդ շերտը գունավոր «հին քաղաք» տեսակի. կամ համարժեք այլ տեսակի 5սմ/	100մ^2	1,110	813,38	902,85
7	Թուջե ձուլածո հենքով փայտյա չորսուներով նստարանների տեղադրում , h-0,8, L-1800 / "Նիկոլ Դուման" արտադրության, NC 001 "Մասիս" տիպի կամ այլ տեսակի համարժեք որակի /	հատ	8,00	182,05	1456,36
8	Թուջե ձուլածո հենքով փայտյա չորսուներով աղբամանների տեղադրում , Φ-570, h-650 / "Նիկոլ Դուման" արտադրության, AW 002 տիպի կամ այլ տեսակի համարժեք որակի /	հատ	4,00	91,02	364,09
9	Սպորտային խաղասարքի տեղադրում / "ՄԱԳՆՈՆ" արտադրության, «ՏԱՐԶԱՆ» տեսակի, 4.8x3.9x3.0 չափերի, կամ այլ տեսակի համարժեք որակի /	հատ	1,00	1135,51	1135,51
10	Մանկական ճոճանակի տեղադրում / "ՄԱԳՆՈՆ" արտադրության, «Շղթաներով փոքր ճոճանակ 4 Չափս (մ) : 5.2 x 1.8 x 0.5» տեսակի, կամ այլ տեսակի համարժեք որակի /	հատ	1,00	434,63	434,63

	Այլ աշխատանքներ				
1	Տարածքի նախապատրաստում սիզամարգի համար բերված բնահողից 15սմ շերտի ավելացումով և նախապատրաստումով ցանքի համար	100մ2	1,460	56,25	82,13
2	Սիզամարգի ցանք	100մ2	1,460	19,60	28,62
3	Կարմիր մշակված լվացված խարամի շերտի ստեղծում խաղահրապարակներում ուղղումով, համահարթեցումով և տոփանումով 20սմ / 265քմ/	մ^3	53,00	5,82	308,70
4	**Աստիճաններ**			0,00	0,00
5	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով խրամուղում	մ3	2,250	3,38	7,61
6	Բուտաբետոնե հիմքերի պատրաստում B-12,5 դասի բետոնից	մ3	2,250	46,18	103,91
7	Բետոնե նախաշերտ B7,5 ծանր բետոնից 10սմ	մ^3	0,450	44,07	19,83
8	Բազալտե արտաքին աստիճանների տեղադրում 150*300մմ	մ	13,8	11,52	158,95
	Կանաչապատ տարածքի ոռոգման ցանցի կառուցում				
1	Բուսահողի շերտի քանդում ձեռքով պահպանում և վերականգնում	մ^3	16,6	7,75	128,27
2	Պոլիէթիլենային խողովակի տեղ. d=50*2,4մմ 8,0մթն.ճնշ փորձարկում	մ	138,00	0,37	51,26
3	Եռաբաշխիչ 50/50/25մմ պոլիէթիլեն	հատ	45,0	3,09	139,10
4	Պարուրակային կցորդիչ dn 25 մմ	հատ	45,0	0,27	12,31
5	Փականների տեղադրում կցորդիչով Dպ=25մմ , Pպ - 1,6ՄՊա	հատ	45,0	7,12	320,48
6	Ջրացայտիչ D=25 R-3,0m	հատ	45,0	2,11	94,73
7	Թաղված դատարկման փական Dպ=50մմ , Pպ - 1,6ՄՊա	հատ	3,0	10,10	30,30
8	Պոլիէթիլենային խողովակի ձևավոր մասեր	հատ	30,0	1,22	36,49
9	Փականների տեղադրում կցորդիչով Dպ=50մմ , Pպ - 1,6ՄՊա	հատ	1,0	10,10	10,10
	Հանգստի տաղավարի կառուցում				
	Տաղավարի կառուցում և տեղադրում				
1	Բնահողի մշակում ձեռքով / հիմքերի փոսորակներ /	մ^3	1,71	3,38	5,78
2	Հենասյուների հիմքերի իրականացում բուտաբետոնից Բ-12.5 դասի բետոնից	մ3	1,224	42,21	51,66
3	Ավելացած գրունտի հետլիցք	100մ3	0,00486	141,40	0,69
4	Ավոլորդ հողի և շինաղբի մշակում 0.25մ3 տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոմեքենայի վրա	100մ3	0,01224	95,88	1,17
5	Տեղափոխում 5կմ	տն	2,2032	2,01	4,42
6	Բետոնե եզրաքարի տեղադրում 0,5*0,2*0,08մ	100մ	0,16	494,34	79,09
7	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ^2	0,12	158,37	19,00
8	Ավազի հիմնատակի իրականացում 100մմ	մ^3	1,2	7,75	9,30
9	Բետոնե սալիկներով հարթակի իրականացում / երկրորդ շերտը մոխրագույն 60մմ /	100մ^2	0,06	751,04	45,06
10	Բետոնե սալիկներով հարթակի իրականացում / երկրորդ շերտը գունավոր 60մմ /	100մ^2	0,06	813,38	48,80
11	Մետաղական կարկասի կառուցում	տ	0,67065	341,44	228,99
12	Պողպատյա քառակուսի խողովակ 80*80*2	գմ	10,24	2,28	23,35
13	Պողպատյա ուղղանկյուն խողովակ 60*30*2	գմ	66,68	1,23	82,12
14	Պողպատյա քառակուսի խողովակ 20*20*2	գմ	80,34	0,55	43,97
15	Պողպատյա քառակուսի խողովակ 30*30*2	գմ	72,28	0,85	61,54
16	Պողպատյա անկյունակ 20*20*3	գմ	59	0,49	28,70
17	Պողպատյա անկյունակ 50*30*2	գմ	51,5	1,08	55,59
18	Պողպատյա թիթեղ ձևավոր, " փախլավա", 1,0մմ	մ2	6	4,88	29,28
19	Մետաղական կարկասի երկշերտ յուղաներկում	100մ2	0,471	162,92	76,73
20	Պոլիկարբոնատ 8մմ	մ2	9	4,65	41,87
	Ծածկի կառուցում				
1	Ծածկի կառուցում ցինկապատ ներկած КП18--0,5мм թիթեղից	100 մ^2	0,179	885,77	158,55
	Մետաղական սեղանի տեղադրում				
1	Մետաղական կարկասի կառուցում	տ	0,05947	341,44	20,31
2	Պողպատյա քառակուսի խողովակ 40*40*2	գմ	3,2	1,09	3,50
3	Պողպատյա թիթեղ 2 մմ	մ2	2,1	9,08	19,06
4	Պողպատյա ուղղանկյուն խողովակ 40*20*2	գմ	9,8	0,85	8,34
5	Մետաղական կարկասի յուղաներկում	100մ2	0,05888	162,92	9,59
	Նստարանների տեղադրում				
	Այլ աշխատանքներ				
1	Առկա մետաղական ցանկապատի յուղաներկում	100մ2	0,264	162,92	43,01
	Արտաքին լուսավորության ցանց				
	Ապամոնտաժման աշխատանքներ	**4**			
1	Առկա պողպատե խողովակներից հենասյուների ապամոնտաժում 4 հատ	տ	0,415	52,19	21,64
	Հենասյուների տեղադրում	6,0	հատ		
	Քանդման աշխատաներ				
1	3-րդ կարգի գրունտի քանդում փոսորակներում	մ^3	1,50	3,38	5,07
2	Գրունտի հետլիցք	մ^3	0,06	1,73	0,10
3	Գրունտի հարթեցում տեղում	մ^3	1,30	1,29	1,68
4	Ավելորդ գրունտի և շինաղբի բարձում ա/մ վրա	մ^3	0,14	0,55	0,08
5	Նույնի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տ	0,2	1,57	0,36
	Բետոնային աշխատանքներ				
1	Բետոնե նախապատրաստական շերտ B 7,5 բետոնից	մ^3	0,150	41,66	6,25
2	Խամքարաբետոնե հիմքերի պատրաստում հենասյուների համար B 12,5 դասի բետոնով	մ3	1,295	42,21	54,66

	և ճեղքած բազալտով				
3	Հենասյուների տեղադրում պողպատե խողովակներից	հատ	6,0	5,22	31,29
4	Պողպատե խողովակ 108x3,5մմ	մ	42,0	4,36	183,26
5	Ամրան Ա3 դասի 12մմ	տ	0,004	442,17	1,64
6	Պողպատե խողովակների, լայնակների և բարձակների մոնտաժում	տ	0,428	77,22	33,08
7				0,00	0,00
8	Բարձակների 40*3մմ խողովակների արժեքը	մ	9,0	0,91	8,21
9	Բարձակների 51*3,0 մմ խողովակների արժեքը	մ	1,2	1,81	2,17
10	Լայնակների 50x50x5մմ անկյունակների արժեքը	մ	3,00	1,75	5,25
11	ՑՑիկ Ա-16-Ռ-25	հատ	12,0	0,30	3,65
12	Հենասյուների երկշերտ յուղաներկում	մ^2	14,49	1,71	24,79
	էլեկտրասնուցում				
1	Փողոցային արտաքին լուսավորության 50Վտ LED լուսատուների մոնտաժում	հատ	6,0	23,24	139,41
2	Օդային գծի անցկացում ԱՊՎ-1x16	կմ	0,360	247,91	89,25
3	Հաղորդալար ալյումինե ԱՊՎ 10 մմ^2	կմ	0,027	173,52	4,69
4	Մեկուսիչ	հատ	12,00	1,22	14,60
	Ընդամենը				**26069,89**
	ԱԱՀ 20%				**5213,978**
	Ընդամենը				**31283,87**

Կապալառուն պետք է ունենա սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման օրենսդրությամբ նախատեսված իրավասություն (<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված լիցենզիաներ և ներդիրներ), ինչպես նաև պետք է բավարարի նախագծով աշխատանքային ռեսուրսների և մեքենա-մեխանիզմների համար սահմանված նվազագույն պահանջներին (եթե այդպիսիք նախատեսված են):

Կապալառուն պետք է ունենա շինարարության իրականացման 1-ին կամ 2-րդ դասի լիցենզիա՝ հետևյալ ներդիրներով.

- **Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ (03.04)՝ 1-ին կամ 2-րդ կարգի ներդիր, հավաստագիր:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 450 030
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ
Գ ՄԽՉՅԱՆ 2Փ. S30
Հ/Հ 22001559067600 0
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՎՀՀ 04239318

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա/Ձ ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Արարատի մարզ գ Մխչյան 2 փողոց, տուն 30
<<Ակբա բանկ>> ՓԲԸ
հ/հ 220019850357000
ՀՎՀՀ 47759406

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 20 » փետրվարի 2026թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրի թիվ 1 և թիվ 2 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքների

Հ/Հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտ
1	Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրի թիվ 1 և թիվ 2 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքներ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր

Ավարտված շինարարական օբյեկտի չափագրման անհրաժեշտության առաջացման դեպքում այն կատարվելու է Կապալառու ընկերության կողմից և վերջինիս միջոցներով՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, Պատվիրատուի կողմից սահմանվող ողջամիտ ժամկետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 450 030
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ
Գ ՄԽՉՅԱՆ 2Փ 30
Հ/Հ 220015590676000
ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 04239318

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ա/Ձ ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Արարատի մարզ գ Մխչյան 2 փողոց, տուն 30
<<Ակբա բանկ>> ՓԲԸ
հ/հ 2200198503570000
ՀՎՀՀ 47759406

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 20 » փետրվարի 2026թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրի թիվ 1 և թիվ 2 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքների		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 450 030
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԻԼ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ
Գ ՄԽՉՅԱՆ 2Փ. Տ30
Հ/Հ 220015590676000
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՎՀՀ 04239318

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա/Ձ ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Արարատի մարզ գ. Մխչյան 2 փողոց, տուն 30
<<Ակբա բանկ>> ՓԲԸ
հ/հ 220019850357000
ՀՎՀՀ 47759406

/ստորագրություն/
Կ.Տ